ՇԻՐԱԿԻ ԳԼԽԱՏՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՎԵՏԻՔ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Մ. թ. ա. 401 թ. հույն զորավար Քսենոփոնն, իր ղեկավարած 10-հազարանոց զորքով անցել է Հայկական լեռնաշխարհով և տվել անցած ճանապարհի բնակավայրերի ու կացարանների նկարագրությունը: Քսենոփոնի աշխատության հայերեն թարգմանության մեջ փաստված է. «...անասունները ու մարդիկ ասլրում էին կողք-կողքի: ...Անասունները դուրս էին գալիս երդիկով, մարդիկ այլ ճանապարհով...»[1]: Գետնափոր կացարանները հայտնի են վաղնջագույն ժամանակներից: Ախուրյանի ձորի ամբողջ տարածքում ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ նոր քարեդարյան մարդը բնակության համար քարայրները մասամբ հարմարեցրել է. կացարանի հարմարավետության համար փորել, տաշել է քարերը: Մարմաշենի վանքի տարածքում մանրամասն ուսումնասիրվել է մի քանի տասնյակ քարայր (հայտնաբերվել են նեոլիթ-էնեոլիթին պատկանող կարծր քարերից պատրաստված գործիքներ, որոնք մինչ պեղումները մարդու ուշադրությունից դուրս մնալու հետևանքով, պահպանվել էին անաղարտ)[2]:

Նույն մուտքից մարդկանց և անասունների դուրս գալը ոչ միայն հարմար, այլև տրամաբանական չէ: Եթե հնարավոր է գետնի վրայով երթևեկել, ապա պարանի օգնությամբ ուղղահայաց դիրքով նույնը կատարելը բնականաբար անիմաստ է: Հետաքրքիրն այն է նաև, որ հույն զորավարն իր ամբողջ պատմության մեջ նկարագրում է արմենների զգուշավոր և մանավանդ թշնամական վերաբերմունքը թե՛ զորքի և թե՛ զորավարի նկատմամբ: Սահմանամերձ գյուղերում, որոնք հույների հարձակման ժամանակ առավել վտանգավոր կացության մեջ էին ընկնում, մարդիկ կառուցում էին վերգետնյա աշտարակավոր աներ: Երկրի խորքում, ռազմական նկատառումներով, նման աշտարակավոր տների կառուցման անհրաժեշտությունը չկար: Հասկանալի է, որ խորքում գտնվող բնակավայրերն ավելի ապահով էին: Պարզ է նաև, որ գետնափոր տներ կառուցելն ավելի ծանր աշխատանք էր և դրա անհրաժեշտությունը Հայկական լեռնաշխարհում չի զգացվել: Պետք է ընդունել հետևյալ իրողությունը. հունական 10-հազարանոց զորեղ բանակի դեմ Հայկական լեռնաշխարհում ապրող արմենները կանոնավոր մարտերի միջոցով չէին կարող հաղթել: Անհրաժեշտության դեպքում նրանք դիմում էին պարտիզանական կռիվների, որոնք էլ շատ դեպքերում ցանկալի չէին: Սակայն Քսենոփոնի նկարագրությունների մեջ զարմանք է պատճառում (ինչպես իր ժամանակ իրեն,

---

1 *Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս. Երևան, 1970, էջ 97:*

2 *Պեղումները՝ Հ. Եղիազարյանի և Ս. Հարությունյանի, նյութի թվագրությունը՝ Բենիկ Երիցյանի:*

այնպես էլ այսօր մեզ), այսպես կոչված, գետնափոր շինությունը, որից ուղղահայաց ճանապարհով ելումուտ էին անում և՛ մարդիկ, և՛ անասունները: Ուշագրավ է, որ Քսենոփոնի նկարագրած գետնափոր շինությունների մասին ուրիշ ոչ մի գրավոր վկայություն չկա:

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի բնական ծածկույթը յուրահատուկ է ոչ միայն իր չափազանց կտրտված ռելիեֆով, այլ նաև քարերի առատությամբ (հիմնականում տուֆ և բազալտ): Այստեղ գետնի մեջ տուն կառուցելը անհամեմատ դժվար է: Հազիվ թե մեր նախնիները այդպիսի անօգուտ աշխատանք կատարեին: Այդպիսի կացարաններ հայտնի են Կումայրիի, Երազգավորսի, Հայկավանի, Մարմաշենի, Գուսանագյուղի պեղումներից: Ավելին, գրանցից այսօր կարելի է տեսնել նաև Աշոցքում, Սևանի ավազանում, Ախուրիկում, Ջրափիում, բազմաթիվ լեռնային ու նախալեռնային բնակավայրերում:



Քանի որ անառարկելի ճշմարտության ուժ ստացած փաստի դեմ հարուցած կասկածը գեռևս նրա ժխտումը չէ, հարկ է պարզել. հնարավոր է, որ ականատեսը մի քանի անգամ լինելով նույն տեղում, սխալվեր: Գետնափորը, ռուսերեն՝ землянка, այսօր էլ գործածական է նույն իմաստով: Այդ կացարանների պատերը հողից էին, այսինքն բացակայում էր քարե շարվածքը: Լավագույն դեպքում՝ փլվածքները կանխելու և ապահովելու համար, փայտյա հենակներ էին գնում: Հայաստանում գետնափոր բնակելի տունը կորցնում է իմաստը, քանի որ մթերքները հողի մեջ պահելու անհրաժեշտություն չկար և ոչ վաղ անցյալում: Հազարաշենի բաղկացուցիչ մասը կազմող քիլարում պահվում էր գերգաստանի ողջ մթերքը:

Միջնադարյան Հայաստանի գետնափորներից առավել ուսումնասիրված են Անի մայրաքաղաքինը[3] և Սպիտակի ժայռափոր բնակավայրը[4]: Երկրաշարժի հետևանքով Աշոցքի Սարապատ գյուղում բացվել է նույնատիպ հուշարձան: Դրանից ոչ հեռու գտնվող Սարիար գյուղում առկա է նմանատիպ մի ժայռափոր կացարան: Սարապատի գետնափորը գտնվում է գյուղի հյուսիսային կողմում: Մինչ 1988թ. երկրաշարժը այստեղ եկեղեցի

3 К и п ш и д з е. Пещеры Ани. Ереван, 1972.

4 Ա. Ա. Քալանթարյան, Գ. Գ. Սարգսյան. Սպիտակի վիմափոր բնակավայրը.– «Գիտություն և տեխնիկա», 1980, № 4, էջ 21–26:

է եղել, որի շրջապատում պահպանվել են տարբեր ժամանակաշրջանների գերեզմաններ:



Նկ. I. Հազարաչենը գետնից գուրս կառուցվածք է:
Նկ. II. Հազարաչենը քիչ մասով է գետնի մեջ:
Նկ. III. Հազարաչենը 1/4 մասով է գետնի մեջ:
Նկ. IV. Հազարաչենը 1/3 մասով է գետնի մեջ:



Նկ. V. Գլխատուն: Հազարաչենը 1/2 չափով է գետնի մեջ:

Գլխատունը հիմնական ու տարածված կացարան է եղել ողջ Հայկական լեռնաշխարհում: Ծավալատարածական կառուցվածքով համապատասխանել է նախնադարյան մարդու գերդաստանի պահանջներին: Տարածական առումով թե՛ հորիզոնական, թե՛ ուղղահայաց չափերի մեջ գլխատունը կառուցողական սահմանափակում չունի (նկ. I): Գլխատան ավանդական կառուցվածքը, գատելով Անբերդի ու Շիրակի հնագիտական պեղումների արդյունքներից, հազարամյակների պատմություն ունի[5]: Զմոռանանք, որ գլխատան արտաքին պատերը, հետևաբար և մուտքը շատ ցածր են լինում: Այսպիսով, մեր կարծիքով, սա հենց այն տունն է, որ նկարագրել է Քսենոփոնը և անվանել գետնափոր: Միայն թե այդ անվանումը ոչ մի կերպ չի համապատասխանում չենքի կառուցվածքին: Վերջին հաշվով, եթե ռելիեֆի մեջ «հագցված» գլխատունը գետնափոր համարվի, ապա նույն կերպ պետք է գնահատել Սելիմի կարավանատունը, Հաղպատի և Հաղարծինի սեղանատները: Կացարանը պետք է ելնի տեղանքի բնույթից: Մակերեսը ծածկվում էր փոքրաչափ թռիչքներ ունեցող սյուներով ու հե-

5 *Ս. Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Անբերդ. Երևան, 1978, էջ 34, նկ. 35, ավելի մանրամասն՝* Р. Е п р е м я н. Водоснабжение древней и средневековой Армении. Ереван, 1992.

ծաններով: Կացարանները պատկից էին: Հազարաշենի լուսավորությունը ապահովվում էր երդիկից, որը ծառայում էր նաև կենտրոնում տեղադրված թոնրի ծուխը հեռացնելուն: Վերջինիս անհրաժեշտությունից դրդված միջին թռիչքի ծածկը կառուցվում էր բրգաձև (նկ. II, III, IV, V):

Այսպիսով, Քսենոփոնի նկարագրածը սովորական հայկական գլխատուն է եղել, որը ոչ մի կապ չունի գետնափորի հետ: «Աշտարակավոր» տան նկարագրությունը հանդիպում է միայն Քսենոփոնի մոտ: Այդ մասին ոչինչ հայտնի չէ նաև հնագիտական պեղումներից: Աշտարակավոր բառը դժվար վերծանելի է, քանի որ այն չի բացատրվել «Անաբասիսում»: Արդյո՞ք այդ տունն աշտարակաձև էր, թե տուն էր, որին կից կամ տանիքին՝ աշտարակ էր կառուցված (Վրաստանի հարավային շրջաններում, մինչև օրս էլ կան ուղղանկյուն աշտարակներ հիշեցնող տներ): Մեր կարծիքով, այս հարցերին վերջնական պատասխան տալու համար ուսումնասիրության անհրաժեշտություն կա: Կարծում ենք նաև, որ «Անաբասիսում» հիշատակվող այս երկու տիպի տների փաստը բնավ չի նշանակում, թե Քսենոփոնի ժամանակներում Հայաստանում բնակելի կացարանների ընդամենը երկու տիպ կար:

Քսենոփոնը գրում է. «Ձյունը ծածկել էր ամեն ինչ... Տանուտերը սովորեցրեց ձիերի ոտքերը փաթաթել, որպեսզի չսառչեն»: Պարզվում է, որ այդ տարի սովորական խստաշունչ ձմեռ էր և նշված գավառի բնակչության համար դա անսովոր երևույթ չէր: Գլխատան բնակիչները դիտեին, որ ձյունառատ տարիներին հաճախ փակվում էր տան մուտքը, տանտերը, հարկադրված, երիտասարդներից մեկին դուրս էր հանում երդիկից, որ մուտքը մաքրի: Նկատի ունենալով ստեղծված իրավիճակի առանձնահատուկ բնույթը, պետք է ենթադրել, որ գյուղացիները օգտագործել են ձյան առատության հանգամանքը՝ դժվարացնելու համար տան ելումուտը: Ավելին, քանի որ ղորքը երկար է կանգնել բնակավայրի մոտ, քան նախապես ենթադրվել է, իսկ անասուններին հնարավոր չէր ջրել ասանը, ուստի նրանք ստիպված մաքրել ու բացել են տան մուտքերը: Ըստ երևույթին նկատելով, որ հույները գլխի չեն ընկնում կատարված խորամանկությունը, բնակիչները շարունակել են իրենց սովորական կյանքը:

XIX–XX դդ. սկզբում կառուցված մեր բնակավայրերը ապացույց են այն բանի, որ հատակագծման նման ձևը անհրաժեշտ պայման էր, որը, սակայն, գուրս չէր գալիս պասսիվ պաշտպանության կառուցապատման սկզբունքից: Այն հիշեցնում է սովորական մարդկային բնազդ, որ վտանգի դեպքում ստիպում էր նրանց համախմբվել միևնույն տեղում:

Պետականության առկայության պայմաններում ամրոցները, քաղաքները ու բնակավայրերը ունեին կանոնավոր հատակագծեր, իրենց որոշակի պաշտպանական համակարգերը՝ պարիսպներն ու մուտքերը: Վերջիններս ընդհանուր հոգածության առարկա էին և խիստ տարբերվում էին անիշխանության ժամանակաշրջանների հատակագծումից: Ինակարաններն իրենց ներքին կառուցվածքով, հատակագծային լուծումներով, ժամանակի արդյունք են, որտեղ արտահայտություն է գտել ժամանակի պահանջը:

Նախաուրարտական, ուրարտական և քսենոֆոնյան ժամանակների կառույցները՝ Անբերդի, Մարմաշենի, Վահրամաբերդի և հատկապես Հայկա-

վանի բնակավայրերը, հարաբերվում են ամրոցներին ու պարիսպներին, այն դեպքում, երբ անիշխանության շրջանում հակառակ պատկերն ենք տեսնում:

О ГЛХАТУНАХ ШИРАКА

СЕРГЕЙ АРУТЮНЯН, АВЕТИК МИРИДЖАНЯН

Р е з ю м е

В 401 г. до н. э. под предводительством Ксенофона 10-тысячное греческое войско прошло по Армении. Армяне всеми средствами боролись против незваных гостей. Суровая снежная зима перекрыла входы и выходы. Домовладельцы делали вид, будто одним вертикальным проходом из глхатуна выходят и люди и скот, введя врага в заблуждение. Такой тип сельского жилища существовал до конца XIX – начала XX века.

ABOUT THE GLKHATOUNS OF SHIRAK

SERGEY HARUTYUNYAN, AVETIK MIRIJANYAN

S u m m a r y

In 401 B. C. the Greece army of ten thousands under the leadership of Xenophon, passed through Armenia. Armenians put all their efforts against the unexpected guests. The cold snowy winter closed all the entries and exits. The habitants pretended that through a vertical exit from Glkhatoun go out both men and the cattle, trying to confuse the enemy. Such type of village houses existed till the end of the 19th and the beginning of the 20th centuries.